ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԱ-Ի ՆԱԽԱԳԱՀՈՒԹՅՈՒՆՈՒՄ

Հայկական ՍՍՌ ԳԱ-ի Նախագահությունը փետրվարի 21-ին քննության առավ Հասարակական Գիտությունների «Տեղեկագրի» աշխատանքները։

Նախագահությունը լսեց «Տեղեկագրի» պատ. խմբագիր ընկ. Ծ. Աղայանի զեկուցումը խմբագրության 1950 թ. աշխատանքների մասին։ Հարակից զեկուցում տվեց «Տեղեկագրի» աշխատանքներն ստուգող հանձնաժողովի նախագահ ընկ. Խ. Մոմջյանը։

Նախագահությունը նշեց, որ Հայկական ՍՍՌ Գիտությունների Ակադեմիայի Հասարակական Գիտությունների բաժանմունքի «Տեղեկագրի» աշխատանքի մասին Հայկական ՍՍՌ Գիտությունների Ակադեմիայի Նախագահության 1950 թվի մարտի 2-ի որոշումից հետո անցած ժամանակաշրջանում, խմբագրությունը, Հայկական ՍՍՌ ԳԱ թղթակից անդամ Ծ. Աղայանի ղեկավարությամբ, զգալի աշխատանք է կատարել «Տեղեկագրի» աշխատանքներում եղած թերությունների վերացման ուղղությամբ։

«Տեղեկագրի» 1950 թ. համարներում հրապարակված հոդվածների մի զգալի մասը նվիրված է կարևոր և սկզբունքային հարցերի։ «Տեղեկագրի» աշխատանքներին ներգրավված են գիտական աշխատողների նոր, երիտասարդ կադրեր. ստեղծված է «Եղբայրական ռեսպուբլիկաներում» հատուկ բաժին, որի նյութերը նպաստում են սովետական ռեսպուբլիկանների գիտնականների միջև կապի ամրացմանը. «Տեղեկագրի» բոլոր 12 համարները լույս են տեսել պլանով սահմանված ժամկետներին։

Սակայն, դրա հետ մեկտեղ «Տեղեկագրի» աշխատանքներում գոյություն ունեն լուրջ թերություններ։ Մի շարք հոդվածների գիտական մակարդակը դեռևս շարունակում է մնալ ոչ բարձր։ Բաժանմունքի առավել որակյալ, առաջատար կադրերը չեն մասնակցում «Տեղեկագրի» աշխատանքներին։ Չնայած Նախագահության 1950 թվի մարտի 2-ի որոշման, խմբագրական կոլեգիայի բոլոր անդամները ներգրավված չեն «Տեղեկագրում» հրապարակվող հոդվածները գրախոսելու և խմբագրելու աշխատանքներին։ Հասարակական գիտությունների բաժանմունքի գիտա-հետազոտական հիմնարկների դեկավարները հաճախ իրենց գիտական աշխատակիցների հոդվածներն ուղարկում են խմբագրությանը՝ առանց նախապես լուրջ կերպով և խնամքով ուսումնասիրելու այդ հոդվածները։

«Տեղեկագրում» տպագրվել են գիտական տեսակետից թույլ հոդվածներ (Հ. Վարդանյանի հոդվածը № 12-ում)։

Մի շարք հոդվածներում տեղ են գտել ոճական և սրբագրական սխալներ։ Այդ տեսակետից առանձնապես վատ է դրությունը ռուսերեն հոդվածների և ամփոփումների հրապարակման գործում։ Այդ հոդվածներից և ամփոփումներից մի քանիսը գրված են վատ ռուսերենով։

Դրությունը բավարար չէ նաև «Գրախոսություն և քննադատություն» բաժնում։ Ծավալված չէ գիտական քննադատությունը և ինքնաքննադատությունը, չկան գիտական կարծիքների պայքարն արտահայտող հոդվածներ, առանց որի հնարավոր չէ գիտության զարգացումը։

Հայկական ՍՍՌ Գիտությունների Ակադեմիայի Հրատարակչությունը հարկ եղած միջոցները ձեռք չի առել «Տեղեկագրի» համարները տարածելու ուղղությամբ։ Տիրաժի մի զգալի մասը չի հասնում ընթերցողին։

Նախագահությունը նշեց մի շարք կոնկրետ միջոցառումներ։

Հանձնարարվեց խմբագրական կոլեգիային՝ ընկեր Ստալինի հանճարեղ աշխատությունների հիման վրա էլ ավելի ընդլայնել և խորացնել աշխատանքը՝ լեզվաբանական պրոբլեմների ուսումնասիրությունը ծավալելու, պատմության, գրականության, արվեստի նորագույն շրջանի հարցերն ընդգրկելու և եղբայրական ռեսպուբլիկաների ակադեմիաների գիտական կյանքը լուսաբանելու ուղղությամբ։

Հանձնարարվեց «Տեղեկագրի» խմբագրական կոլեգիային՝ բարձրացնել հոդվածների

գիտական մակարդակը, ղեկավարվելով պարտիայի և կառավարության՝ սովետական գիտության զարգացման ուղիների վերաբերյալ որոշումներով։

Անհրաժեշտ համարվեց ապահովել հասարակական գիտությունների բաժանմունքի գիտա-հետազոտական հիմնարկներում, ինչպես և Հայկական ՍՍՌ այլ գիտական հիմնարկներում աշխատող բարձրորակ գիտնականների մասնակցությունը «Տեղեկագրի» աշխատանքներում, ուժեղացնել դրախոսությունների բաժինը, բարձրացնել քննադատական հոդվածների որակը, սիստեմատիկ դարձնել բաժանմունքի և գիտա-հետազոտական հիմնարկների օգնությունը խմբագրական աշխատանքներին, տպագրության հանձնելով Խմբագրական-հրատարակչական խորհրդի կողմից ստուգված հոդվածները։